ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան 22.02.2023թ.

1. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2023 թվականի փետրվարի 22-ի հերթական նիստին.

ա) մասնակցում էին՝

Վ. Քերոբյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար, Խորհրդի նախագահ

Ա. Դանիելյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար, Խորհրդի անդամ

Ն. Տերյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Ա. Հարությունյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Կ. Չիլինգարյան - «Սպառողների խորհրդատվության կենտրոն» նախագահ, Խորհրդի անդամ

Տ. Քեյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի աջակցության ծրագրերի ղեկավար, Խորհրդի անդամ

Կ.Սահակյան - ԵՊՀ դասախոս, տնտեսագիտական գիտությունների թեկնածու, Խորհրդի անդամ

Գ. Սահակյան - Խորհրդի քարտուղար

Ա. Կոտոյան – Տեսչական մարմնի ղեկավար

Ա. Մկրտչյան – Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ

Ա. Սարգսյան - Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ

բ) բացակայում էին՝

Է.Հակոբյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Լ.Նանուշյան - ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Է. Էլբակյան - ՀԱՊՀ մինչբուհական կրթության գծով պրոռեկտոր , Խորհրդի անդամ

Հերթական նիստի օրակարգային հարցեր.

2. Օրակարգում ընդգրկված հարցերն են՝

1. Նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ քննարկում:
   Զեկուցող՝ Ա.Կոտոյան

2. Հավանություն տալ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի փոփոխությանը:
   Զեկուցող՝ Ա.Կոտոյան

3. Շուկայում առկա ավտոյուղերի վերահսկողության վերաբերյալ քննարկում:
   Հարցը ներկայացնող՝ Վ.Քերոբյան

4. ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հաջորդ կայանալիք նիստի ամսաթիվը համաձայնեցնելու մասին:
   Զեկուցող՝ Ա.Կոտոյան

3. Քննարկվեց օրակարգի հարց՝ նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ քննարկում.

Նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ օրակարգային հարցը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյանը և հայտնեց, որ նախորդ նիստին Տեսչական մարմնի 2022 թվականին իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվության ներկայացումից հետո առաջացած հարցերին կարող է պատասխանել այսօրվա նիստի ընթացքում: Վահան Քերոբյանը առաջարկեց մշակել ընթացակարգ, որն հնարավորություն կտա արդյունքային ցուցանիշների հիման վրա տարեվերջին որոշելու Տեսչական մարմնի լավ կամ վատ

աշխատանքը, ինչին ի պատասխան արձագանքեց Արմեն Կոտոյանը, հայտնելով որ ավելի արդյունավետ կլինի տվյալ հարցի լուծումը գտնել ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի հետ համատեղ: Վահան Քերոբյանը հայտնեց, որ ստուգումների գործող մեխանիզմը պետք է ամբողջովին փոխվի, ինչի համար նախաձեռնել ենք «ՀՀ-ում ստուգուների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի փոփոխություն, որն հնարավորություն կտա ստուգումները իրականացնել ոչ թե ցանկերով, այլ ռիսկերի գնահատման համակարգի միջոցով: Վահան Քերոբյանը կրկին անդրադարձավ ստուգումների թվայնացման հարցին, ինչին արձագանքեց Արմեն Կոտոյանը, հայտնելով, որ ստուգումները հնարավորինս թվայնացման գնալու հարցը քննարկվել է նաև ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակում: Վահան Քերոբյանը առաջարկեց, որ թվայնացման գնալը դառնա Տեսչական մարմնի պլան: Արմեն Կոտոյանը հայտնեց, որ Տեսչական մարմնին անհրաժեշտ են թվային գործիքներին տիրապետող համապատասխան մասնագետներ, փորձագետներ, ովքեր ամբողջությամբ կուսումնասիրեն և կներկայացնեն ստուգումների պլանը: Ստուգումների թվայնացման պլանավորման հարցի վերաբերյալ Վահան Քերոբյանը հանձնարարեց Նարեկ Տերյանին համագործակցել Համակարգման գրասենյակի, Տեսչական մարմնի, պետական համալսարանի ֆինանսական ռիսկերի վաշվարկման բնագավառի ներկայացուցիչների, անհրաժեշտության դեպքում նաև միջազգային փորձագետների ներգրավմամբ մեկ ամսվա ընթացքում կազմակերպել քննարկումներ հարցին առավել արագ լուծում տալու համար:

4.Քննարկվեց օրակարգի հարց՝ հավանություն տալ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի փոփոխությանը"

Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի փոփոխությանը հավանություն տալու օրակարգային հարցի վերաբերյալ զեկուցեց Արմեն Կոտոյանը, մանրամասն ներկայացնելով տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխության անհրաժեշտությունը, մասնավորապես

այն, որ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության գլխավոր իրավաբանի քաղաքացիական ծառայության պաշտոնի համար չորս անգամ հայտարարված մրցույթներին կամ որևէ դիմում չի ներկայացվել կամ ներկայացված դիմումները չեն բավարարել պաշտոնի անձնագրով սահմանված կրթության պահանջին կամ մրցույթի մասնակիցները չեն ներկայացել մրցույթի թեստավորման փուլին կամ ներկայացած մասնակիցները չեն հաղթահարել մրցույթի թեստավորման փուլը, իսկ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչությունն աշխատում է ծանրաբեռնված ռեժիմով և առկա է համալրման խնդիր, ուստի անհրաժեշտ է քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրերում կատարել փոփոխություն: Արմեն Կոտոյանը տեղեկացրեց, որ վարչության մյուս հաստիքները համալրված են, սակայն միասնականությունը ապահովելու նպատակով անհրաժեշտ է նույն փոփոխությունը կատարել նաև վարչության պետի և գլխավոր իրավաբանների պաշտոնի անձնագրերում:

Որոշվեց միաձայն՝ հավանություն տալ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի փոփոխությանը:

5.Քննարկվեց օրակարգի հարց՝ շուկայում առկա ավտոյուղերի վերահսկողության վերաբերյալ քննարկում "

Հայաստանյան շուկայում առկա ավտոյուղերի վերահսկողության վերաբերյալ քննարկում կազմակերպելու օրակարգային հարցը ներկայացրեց Վահան Քերոբյանը և տեղեկացրեց, որ Հայաստանի Հանրապետությունում կան շարժիչային յուղեր արտադրող ընկերություններ, ովքեր բողոքում են, որ շուկայում առկա վերամշակված շարժիչային յուղերը խանգարում են առողջ մրցակցությանը: Հարցի վերաբերյալ Վահան Քերոբյանը Արմեն Կոտոյանից հետաքրքրվեց թե Տեսչական մարմնի կողմից ինչ աշխատանքներ են կատարվել տվյալ ոլորտում, ի պատասխան Արմեն Կոտոյանը հայտնեց, որ վերամշակմամբ զբաղվում է միայն «Հայք-21» ՍՊ ընկերությունը: Վահան Քերոբյանը հայտնեց, որ շարժիչային յուղերի վերամշակման շուկան շատ վատ վիճակում է և կան շատ արտադրողներ, որոնք աշխատում են ստվերում, ինչին պետք է արձագանքեն իրավապահ մարմինները՝ հիմնականում 6-րդ վարչությունը, սակայն ծանրաբեռնվածության հանգամանքով պայմանավորված աշխատանքները դանդաղում

են: Արմեն Կոտոյանը տեղեկացրեց, որ շարժիչային յուղերի վաճառքը իրականացվում է նաև խաբեությամբ, երբ որակյալ շարժիչային յուղի դատարկ տարան լցվում է անորակ յուղով և սպառողին վաճառվում է որպես որակյալ այն յուղը, ինչն իբր կհամապատասխանի տարայի վրա նշված շարժիչային յուղի որակական հատկանիշներին և հայտնեց, որ հարցի լուծման համար շատ կարևոր է վերահսկողության ընթացքում փորձագիտական միջամտության անհրաժեշտությունը: Վահան Քերոբյանին հետաքրքրեց, թե ովքեր են այն 16 տնտեսավարող սուբյեկտները, որոնց մոտ Տեսչական մարմնի տվյալներով 2022թ.-ի ընթացքում կատարվել են ստուգումներ: Հարցին արձագանքեց Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալը՝ հայտնելով, որ դրանք հիմնականում շարժիչային յուղեր ներմուծողներ են և Հայաստանի Հանրապետությունուն կա մոտավորապես թվով 60 տնտեսավարող, որոնք ներմուծում են 3 հազար տոննայից ավել շարժիչային յուղեր: Նրանցից 42 տնտեսավարողի մոտ իրականացվել են ստուգումներ, իսկ մնացածը կստուգվեն այս տարի: Ստուգված տնտեսավարող սուբյեկտների մոտավոր 90 % -ի մոտ հայտնաբերվել են սերտիֆիկացման խախտումներ, սակայն խախտման հայտնաբերումից մեկ երկու օր անց բոլորը ներկայացրել են համապատասխանության գնահատման փաստաթղթեր: Արմեն Կոտոյանը առաջարկեց սպասել 2 ամիս՝ մինչև կընդունվի Շուկայի վերահսկողության մասին ՀՀ օրենքը, որն հնարավորություն կտա մի քանի տեղից վերցված նմուշ ուղարկել լաբորատոր փորձաքննության: Առաջարկին հակադարձեց Վահան Քերոբյանը և հարցրեց թե ինչու հիմա հնարավոր չէ իրականացնել փորձաքննություն, Արմեն Կոտոյանը պատասխանեց, որ ստուգմամբ հայտնաբերված խախտման համար հնարավոր է նշանակել միայն վարչական տուգանք և գործընթացը կգնա փակուղի, քանի որ հետագա գործառույթների /շուկայից հանելը/ իրականացումը հնարավոր է միայն օրենքի ընդունումից հետո: Վահան Քերոբյանը առաջարկեց չսպասել 2 ամիս և կատարել նման մի վարժություն, այն է մեկ ամսվա ընթացքում տարբեր մարզերում տասը տնտեսավարողի մոտ իրականացնել ստուգումներ: Ստուգման հիմքը ապահովելու դեպքում միայն հնարավոր կլինի այն իրականացնել՝ հայտնեց Արմեն Կոտոյանը և խնդրեց ստուգումները անցկացնել Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կողմից տրամադրված ցանկի համաձայն, ինչին համաձայնվեց Վահան Քերոբյանը և ասաց անհրաժեշտության դեպքում նաև ստանալ Հայաստանի Հանրապետության վարչապետից ստուգումներ անցկացնելու հանձնարարականը: Հնարավոր ռիսկերը բացառելու նպատակով

կարևորվեց նաև տենդերներից փորձանմուշ վերցնելու հանգամանքը: Վահան Քերոբյանին հետաքրքրեց այս թեմայով յուղերի վերամշակման ռեցիրկուլյացիայի լուծումները ինպես են աշխարհում տրված, որն կնպաստի մեզ մոտ տվյալ գործունեությունը ճիշտ ձևով օրինականացնելու համար:

6.Քննարկվեց օրակարգի հարց՝ Հայաստանի Հանրպետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հաջորդ կայանալիք նիստի ամսաթիվը համաձայնեցնելու մասին "

Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հաջորդ հերթական նիստը անցկացնել 2023թ. մարտի 30-ին ժամը 14:00-ին Հայատանի Հանրպետության էկոնոմիկայի նախարարությունում՝ ք.Երևան Միհեր Մկրտչյան 5 շենք հասցեում:

Խորհրդի նախագահ՝

_____ Վ.Քերոբյան
ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝

_____ Գ.Սահակյան
ստորագրություն